ՀՏԴ 947.925 + 955 +327

Doi:10.54503/0135-0536-2024.1-300

ԿԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ. Հայ-իրանական հարաբերությունները 1991–2005 թթ., *Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հրատ., 2023, 257 էջ*:*

Բանալի բառեր՝ Հայ-իրանական հարաբերություններ, «խնդիրներ», շրջափակում, բազմակողմ համագործակցություն, միջնորդական առաքելություն, իրանահայ գործիչներ, իսլամ-քրիստոնեություն խաղաղ գոյակցություն:

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ վերջերս լույս է տեսել ինստիտուտի Հայ գաղթօջախների և Սփյուռքի պատմության բաժնի գիտաշխատող, պ. գ. թ. Կարեն Մկրտչյանի ներկայացվող մենագրությունը (խմբագիրներ՝ պ. գ. դ., պրոֆ. Վահան Բայբուրդյան, պ. գ. դ., պրոֆ. Էդիկ Մինասյան, գրախոս՝ պ. գ. թ. Գրիգոր Առաքելյան):

Ընթերցողի սեղանին է դրվել մեր օրերի համար գիտաքաղաքական կարևոր նշանակություն ունեցող աշխատություն: Ինչպես մենագրության ներածության հենց սկզբում մատնանշել է հեղինակը, «Հայաստանի երրորդ Հանրապետության համար սահմանակից Իրանի Իսլամական Հանրապետության հետ միջպետական հարաբերությունների հաստատումն ուներ կայունության և անվտանգության նշանակություն ԽՍՀՄ-ի փլուզման պայմաններում» (էջ 11): Ավելին՝ Իրանի Իսլամական Հանրապետությունը (ԻԻՀ) շուրջ 30 տարի շրջափակման պայմաններում գտնվող Հայաստանի Հանրապետության (ՀՀ) համար նախևառաջ այն երկիրն էր և է, որը հավասարակշռում է թուրք-ադրբեջանական գործոնը տարածաշրջանում:

Կ. Մկրտչյանի աշխատությունը նվիրված է ոչ միայն խնդրո առարկա ժամանակաշրջանում հայ-իրանական միջպետական հարաբերություններին, այլև այդ հարաբերությունների հաստատման և զարգացման գործընթացում Իրանի հայ համայնքի մասնակցության հարցին: Հարցն այն է, որ հետխորհրդային տարիներին և ընդհուպ նաև մեր օրերում էլ Թեհրան–Երևան պաշտոնական հարաբերություններում իրանական պետության աջակցությամբ քաղաքական, տնտեսական, գիտակրթական ու մշակութային բնագավառներում իրենց ներդրումն են ունեցել և ունեն հայ համայնքի ազգային կառույցներն ու գործիչները:

Աշխատությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկից, հավել-

---

* *Ներկայացվել է 29. II. 2024 թ., ընդունվել է տպագրության 22. III. 2024 թ.:*

վածից, անգլերեն և պարսկերեն ամփոփումներից, անձնանունների ու տեղանունների ցանկից:

«ՀՀ–ԻԻՀ քաղաքական հարաբերությունները» խորագրով առաջին գլխի 6 ենթագլուխները նվիրված են դիվանագիտական հարաբերությունների հաստատման գործընթացին, ԻԻՀ-ի արտաքին քաղաքականության մեջ Արցախի հակամարտության կարգավորման, այդ պայմաններում Ադրբեջանի կողմից հարուցած որոշ «խնդիրների» քննությանը: Հարկ է նշել, որ այս գլխում հեղինակը պատմական ակնարկ է կատարել XX դարի ընթացքում հայ-իրանական սահմանի ձևավորման հարցի շուրջ, ինչպես նաև դիտարկել է ՀՀ–ԻԻՀ հարաբերությունները միջազգային հարաբերությունների համատեքստում՝ միաժամանակ կարևորելով հայ համայնքի մասնակցությունը միջպետական հարաբերությունների հաստատման և զարգացման գործընթացին: Ընդ որում, շեշտը դրվել է Արցախի հակամարտության կարգավորման հարցում միջնորդական առաքելության գործունեության լուսաբանման ընթացքում իրանական և՛ պաշտոնական, և՛ թե հասարակական շրջանակների դիրքորոշումները վերլուծելը: Հանգամանորեն ներկայացվում են ժամանակի իրանական մամուլի էջերում տեղ գտած հրապարակումները:

Հատկանշական է, որ հեղինակը, քննարկելով երկկողմ հարաբերությունները՝ որպես տարածաշրջանային գործոն, միաժամանակ դրանք դիտարկել է միջազգային հարաբերությունների համատեքստում՝ վերլուծելով Իրանի և Արևմուտքի երկրների միջև միջնորդական նախաձեռնություններով հանդես գալու հայկական կողմի փորձերը:

Կ. Մկրտչյանի ուշադրությունից չի սպրդել նաև իրանահայ գործիչների ներդրումը քաղաքական հարաբերությունների հաստատման գործընթացին՝ վերլուծելով դրա հոգեբանական ու սոցիալ-իրավական առանձնահատկությունները՝ բանակցությունները հաջող մեկնարկով սկսելու հարցում:

«ՀՀ–ԻԻՀ տնտեսական հարաբերությունները» խորագրով երկրորդ գլխում (բաղկացած է 7 ենթագլուխներից) հեղինակը հանգամանորեն ներկայացրել է ադրբեջանա-թուրքական շրջափակման պայմաններում Իրանի հետ տնտեսական հարաբերությունների սկզբնավորումը՝ դիտարկելով այդ երկրին՝ որպես Հայաստանի կենսապահովման միջոցների մատակարար: Կ. Մկրտչյանը, իրավամբ, եզրակացնում է՝ տնտեսական կապերի մեկնարկին հայկական կողմը, թեև ադրբեջանական սադրանքների պայմաններում, դժվարությամբ կարողացավ մասնակցել Թեհրանում կազմակերպված միջազգային ցուցահանդեսներին, որոնք տվյալ պահին ունեցել են կարևոր նշանակություն իրանցի և այլ գործարարների հետ նոր կապեր հաստատելու ուղղությամբ (էջ 116): Մյուս կողմից ընդգծվում է, որ «Հայ-իրանական տնտեսական կապերի համաձայնեցման հանձնաժողովի» ստեղծմամբ համակարգված բնույթ է ստացել առևտրատնտեսական հարաբերությունները: Ընդ որում սահմանամերձ առևտուրը նպաստել է տնտեսական և ընդհուպ կենցաղային նշանակության բազմաթիվ խնդիրների լուծմանը իրավական ու կազմակերպչական բնույթի բացթողումներով հանդերձ (էջ 129): Եվ, որպես ասվածի շարունակություն, հեղինակը սահուն կերպով ներկայացրել է տնտեսական կապերում դրանցված ելևէջումները՝ նշելով, որ արտահանման և ներմուծման օրենքների բարդացումը, մաքսային ու հարկային տոկոսադրույքների բարձրացումը խոչընդոտում էին տնտեսական կապերի լիարժեք զարգացմանը:

Ինչ վերաբերում է էներգետիկ ոլորտին, ապա իրանական կողմը նախադրյալներ էր ստեղծում այն տնտեսական կապերի ռազմավարական առանցքում ներառելու համար:

Թերևս տնտեսական կապերի խորացման հարցում առանձին ենթագլխով քննարկվել է իրանական կապուղիների հարցը: Հիշարժան է այն դիտարկումը, որ տնտեսական հարաբերությունների զարգացման համար բացառիկ նշանակություն ունեցավ Արաքս գետի վրայով հիմնական կամուրջի կառուցումը, ինչպես նաև՝ երկու երկրներն իրար կապող օդային և ավտոբուսային հաղորդակցության հաստատումը: Այդ ամենի շնորհիվ մեղմվում է ՀՀ-ին սպառնացող շրջափակումը: Սակայն մյուս կողմից հեղինակը ռազմավարական նշանակության հարց է բարձրացնում այն մասին, որ կապուղիները լիարժեք գործելու հնարավորություն կստանան, եթե Քաջարանի թունելի և երկաթուղու կառուցման նախագծերն իրականություն դառնան (էջ 171):

ՀՀ–ԻԻՀ տնտեսական կապերը քննարկելիս որոշակի տեղ է հատկացված դրանց բազմակողմանի համագործակցությանը (ՀՀ–ԻԻՀ–Հունաստան–Վրաստան, ՀՀ–ԻԻՀ–Թուրքմենստան, ՌԴ–ԻԻՀ–ՀՀ) այդպիսով ընդգծելով դրա տարածաշրջանային և միջազգային նշանակությունը:

Աշխատության երրորդ գլխում «ՀՀ–ԻԻՀ գիտակրթական և մշակութային համագործակցությունը» (բաղկացած է 3 ենթագլուխներից) քննարկվում է ՀՀ–ԻԻՀ գիտակրթական և մշակութային համագործակցությունը: Գիտական բնագավառում կողմերը համեմատաբար ավելի սերտ են համագործակցել սեյսմոլոգիայի, երկրաֆիզիկայի, բժշկագիտության, ինչպես նաև՝ իրանագիտության ոլորտներում:

Խիստ արդիական է հեղինակի այն պնդումը, որ ՀՀ–ԻԻՀ մշակութային հարաբերությունները վկայում են իսլամ-քրիստոնեություն խաղաղ գոյակցության մասին: Քաղաքական առումով կրկնակի է արժևորվում այս իրողությունը՝ նախ չեզոքանում է Արևմուտքում տարածված ԻԻՀ-ի հակաքրիստոնեական քաղաքականության քարոզչությունը, ավելին՝ ստեղծվում է հակակշիռ, ինչպես նաև ի դերև է ելնում Ադրբեջանի կողմից իսլամաղավան աշխարհին հրամցվող այն հորինվածքը, թե, իբր, Արցախի հակամարտությունը հետևանք է հայերի կողմից դրսևորած կրոնական անհանդուրժողականության: Ասվածն ավելի հիմնավոր է դառնում, երբ ներկայացվում են համոզիչ փաստեր հարցի վերաբերյալ:

Կողմերի մշակութային համագործակցությունը նշանավորվում է պաշտամունքային հուշարձանների վերադարձման և վերականգնման աշխատանքներով: Ահա թե ինչու հեղինակն ԻԻՀ-ի մշակութային քաղաքականության ցուցիչ է դիտարկում այն փաստը՝ ԻԻՀ-ը ՀՀ-ի հարևան չորս երկրներից միակն է, որ պետական մակարդակով հոգածություն է ցուցաբերում իր տարածքում գտնվող հայկական եկեղեցիների նկատմամբ՝ հարկ եղած դեպքում վերականգնելով դրանք:

Ուշագրավ է, որ մշակութային կապերի ներկայացման հարցում անդրադարձ է կատարվել ֆիլմարվեստի արտադրության բնագավառում երկկողմ գործակցության սկզբնավորման հարցին՝ նշելով իրանական կինոյի առանձնահատկությունները: Համեմատաբար հաջողված գործակցություն է ծավալվել փաստավավերագրական ֆիլմերի արտադրության ոլորտում:

Մշակութային բազմաժանր միջոցառումները ներկայացված են «Ցաջրի տասնօրյակ» անունով հայտնի տոնակատարությունների շրջանակներում, որն

իրանական կողմը իրականացնում է միայն այն երկրների հետ, որոնց հետ ունի սերտ կապեր:

Հատկանշական է, որ միջմշակութային կապերի գործընթացին ևս իրենց ներդրումն են ունեցել հայ համայնքի գործիչները: Ըստ այդմ առանձնացված են մի քանի բնագավառ, ինչպիսիք են՝ պատմագիտական երկերի թարգմանություն, երկկողմ գրական կապերի զարգացում և մշակութային այլ ծրագրերի իրականացում: Միջպետական հարաբերությունների մակարդակով աշխուժորեն ներգրավված իրանահայ համայնքին և նրա մտավորականությանը հնարավորություն է ընձեռված իր գործունեությունը ծավալել նաև հայրենիքում, կապեր հաստատել մշակույթի, գիտության, արվեստի հայաստանաբնակ գործիչների հետ, կատարել փորձի փոխանակում:

Եզրակացություն բաժնում՝ ամփոփված են աշխատության արդյունքները: Արդիական է հեղինակի այն հիմնավոր և համոզիչ եզրահանգումը, որ 2000-ական թվականների սկզբներին իրականացրած ներդրումային նոր քաղաքականության շնորհիվ իրանական կողմն իր մասնաբաժնով չեզոքացրել է տարածքային հնարավոր փոփոխությունների՝ Մեղրին Արցախի դիմաց Փոլ Գոբլի ծրագիրը: Ավելին՝ ներկայիս աշխարհաքաղաքական զարգացումների պայմաններում նպատակային է 1990-ական թվականների քննարկումների մակարդակում մնացած, սակայն մեծ ներուժ ունեցող ՀՀ–ԻԻՀ–Հնդկաստան եռակողմ համագործակցությունը, որն ի զորու է չեզոքացնել համաթուրանականության սպառնալիքը:

Հեղինակը լիովին իրավացի է, երբ գրում է, որ 1990-ական թվականներին ձևավորված և զարգացման ուղին բռնած հայ-իրանական հարաբերություններում այսօր էլ առկա է մեծ ներուժ և հնարավորություններ, որոնք իրապես կարող են դառնալ կարևոր երաշխիք նոր զարգացումներ ապահովելու և տարածաշրջանում կայուն անվտանգային համակարգ ձևավորելու համար:

Աշխատությունը եզրափակվում է 143 տեղանուններով և 312 անձնանուններով: Այն շարադրված է հայ և օտար տարաբնույթ սկզբնաղբյուրների համադիր քննությամբ: Վստահաբար պնդելի է, որ աշխատությունն աչքի է ընկնում արխիվային փաստաթղթերի առատությամբ, որոնք նոր շունչ են հաղորդում գիտական մակարդակում հայ-իրանական հարաբերությունները քննարկելիս: Դա հեղինակին թույլ է տվել քննելու հետխորհրդային տարիներին ծավալված երկկողմ հարաբերությունների պատմության հետ կապված բազմաթիվ հարցեր:

Մեկ-երկու նկատառում՝ շահեկան կլիներ, եթե գիրքն ունենար ռուսերեն ամփոփում: Գերադասելի կլիներ, որ աշխատությունը թարգմանվեր պարսկերեն և դրվեր իրանցի ընթերցողի սեղանին:

Ինչևէ. հայ-իրանական հարաբերություններին նվիրված Կ. Մկրտչյանի սույն աշխատությունը կարևոր ներդրում է արդի հայագիտության և իրանագիտության մեջ:

ԳԵՎՈՐԳ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Պ. գ. դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայ գաղթօջախների և Սփյուռքի պատմության բաժնի վարիչ: Գիտական հետաքրքրությունները՝ Արևելյան Այսրկովկասի հայությունը XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբներին: Հեղինակ է 4 գրքի և շուրջ 100 հոդվածի: ORCID:0009-0000-7536-6777; sasun-07@mail.ru